

Թիւ 23868  
Փետրուար 7, 1978

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԲՏՆՅ. Եթէնէկեան  
Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ  
Ռէյսին.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Փետրուար 1 թուակիր 2եր նա-  
մակը, ուր տուած էք ծխական ժողովին մէջ կատարուած ընտրութեան  
արդիւնքը--անուանները ընտրեալներուն եւ անոնց ստացած քուէները:

Ձեզի ղրկուած Հոկտ. 27 1972 թուակիր շրջաբերականով յանձնա-  
րարուած էր Յունուար ամսուան ընթացքին գումարուած ծխական ժողովէն  
յետոյ Առաջնորդարան ղրկել հետեւեալ նիւթերը.

1. Ծխական ժողովին ներկայացուած տեղեկագիրները
2. Ծխական ժողովին ներկայացուած ելեւմտական հաշուեկշիռը
3. Առաջնորդարանէն ղրկուած տպագրեալ տեղեկագիրը:

Նորին Սրբազնութեան հրահանգն է որ հաճիր փութով Առաջնորդարան  
ղրկել (թէեւ խոստացած էք անմիջապէս ղրկել ընտրեալներնուն վաւերաց-  
ման պաշտօնագիրը ստանալէ յետոյ) վերոյիշեալ երեք նիւթերը եւս, որ-  
պէսզի կարելի ըլլայ վաւերացնել ծխական ժողովիդ կատարած ընտրու-  
թիւնները:

Նորին յարգանքով

Սուրէն Մանուէլեան  
Իււանապետ